# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.06.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/37**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ալ-Սան» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 09.06.2021թ.),

քննելով «ՀՀ Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սանհանգույցի հիմնանորգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «100-ՂՄԴ-ԳՀԱՊՁԲ- 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ալ-Սան» ՍՊԸ-ի կողմից 07.06.2021թ. ներկայացված (08.06.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/37 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>«Ալ-Սան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ալ-Սան» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 07.06.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով

հայտարարվել է «100-ՂՄԴ- ԳՀԱՊՁԲ- 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Վերը նշված ընթացակարգին, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նոյավան» ՍՊԸ–ն:

Մասնավորապես, «Նոյավան» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է).

| Չափա-բաժինների համարները | Աշխատանքի անվանումը | **Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքներ | **1.879.290 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր իննսուն)** | **375.860 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր վաթսուն)** | **2.255.150 (երկու միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար հարյուր հիսուն)** |

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության (կցվում է) 5-րդ կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ալ-Սան» ՍՊԸ-ի և **«Նոյավան» ՍՊԸ–ի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:**

Նույն արձանագրության 5.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահտող հանձնաժողովը Կարգի 40-րդ կետի՝

5-րդ ենթակետի համաձայն բավարար գնահատված բոլոր մասնակիցներին հրավիրել բանակցությունների, որը տեղի կունենա ՀՀ Արարատի մարզի գ. Ղուկասավանի Արամի 39 հասցեում:

5.5 կետի համաձայն՝ բանակցությունների նիստը հրավիրել **04.06.2021թ**.-ի ժամը 13:00-ին ՀՀ Արարատի մարզի գ. Ղուկասավանի Արամի 39 հասցեում:

«100-ՂՄԴ- ԳՀԱՊՁԲ- 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 03.06.2021թ. ժամը 15:35-ին (արտատպումը կցվում է):

Նույն օրը, այն է՝ 03.06.2021թ. գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը էլ. փոստի միջոցով ուղարկվել է «Ալ-Սան» ՍՊԸ-ին (էլ. հասցեից արտատպումը կցվում է):

Ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ:

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526–Ն որոշմամբ (10.10.2019թ.–ի թիվ 1422–Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն

տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Տվյալ պարագայում «Նոյավան» ՍՊԸ–ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը

| Չափա-բաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքներ | **1.879.290 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր իններսուն)** | **375.860 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր վաթսուն)** | **2.255.150 (երկու միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար հարյուր հիսուն)** |

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

Այսինքն, ուսումնասիրելով «Նոյավան» ՍՊԸ–ի ներկայացրած գնային առաջարկը ակնհայտ է, որ ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված եղել, մասնավորապես՝ 1.879.290 ՀՀ դրամի ԱԱՀ-ն (20 %) կազմում է 375.858 ՀՀ դրամ, այլ ոչ թե 375.860 ՀՀ դրամ, ինչպես նշված է «Նոյավան» ՍՊԸ–ի ներկայացրած գնային առաջարկով:

Այսպիսով, հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ ***<u>եթե գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են,</u>*** քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Մինչդեռ «Նոյավան» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկով ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանել վերոնշյալ իրավական նորմերի և Ընթացակարգի հրավերի պահանջներին, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Նոյավան» ՍՊԸ-ի հայտը ոչ իրավաչափորեն գնահատվել է բավարար:

Վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ գնային առաջարկում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառելի չէ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի տվյալ դեպքում «ԱԱՀ» սյունակում նշված գումարի հաշվարկի սխալը պետք է գնահատել որպես գնային

առաջարկին վերագրվող անհամապատասխանություն՝ ոչ ենթակա շտկման, որի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Նոյավան» ՍՊԸ-ի հայտը պետք անբավարար գնահատվեր և մերժվեր:

Բ) Բացի այդ, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝

- «բ» պարբերության համաձայն՝ հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

«գ» պարբերության համաձայն՝ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է նաև բանակցությունների անցկացման ժամկետները, քանի որ բանակցությունների մասին ծանուցում չի ուղարկվել, այլ ընդհամենը 03.06.2021թ. երեկոյան «Ալ-Սան» ՍՊԸ-ին ուղարկվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության պատճենը (արձանագրության 5.5 կետի համաձայն՝ բանակցությունների նիստը հրավիրել 04.06.2021թ.-ի ժամը 13:00-ին ՀՀ Արարատի մարզի գ. Ղուկասավանի Արամի 39 հասցեում), մինչդեռ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ» ենթակետով հստակ սահմանված է, որ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Բացի այդ, նույն արձանագրությունը, որտեղ սահմանվել է բանակցությունների նիստի անցկացման օրը և ժամը, հրապարակվել է www.gnumner.am կայքում նույնպես 03.06.2021թ., այինքն բանակցություններից ընդամենը մեկ օր առաջ:

Այսպիսով, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32–րդ կետի 2-րդ ենթակետի և 40-րդ կետի պահանջները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի

գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է՝

1. Պարտավորեցնել «100-ՂՄԴ-ԳՀԱՊՁԲ- 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 02.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ «Նոյավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել «100-ՂՄԴ-ԳՀԱՊՁԲ- 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժելու «Նոյավան» ՍՊԸ-ի ներկայացված հայտը:

3. Պարտավորեցնել «100-ՂՄԴ-ԳՀԱՊՁԲ- 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 04.06.2021թ. ժամը 13:00-ին ՀՀ Արարատի մարզի գ. Ղուկասավանի Արամի 39 հասցեում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ընդունված բոլոր որոշումները:

4. Պարտավորեցնել «100-ՂՄԴ-ԳՀԱՊՁԲ- 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անցկացնելու նոր բանակցություններ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.06.2021թ. ժամը 09:43-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

**2. <u>«ՀՀ Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

«ՀՀ Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.06.2021թ. ժամը 09:43-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր

ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ՀՀ Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սանհանգույցի հիմնանորգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «100-ՂՄԴ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Ալ-Սան» և «Նոյավան» ՍՊ ընկերությունները:
2. «Նոյավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ Հավելված 2-ը՝ գնային առաջարկը.

| Չափաբաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | Սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքներ | 1.879.290 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր իննսուն) | 375.860 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր վաթսուն) | 2.255.150 (երկու միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար հարյուր հիսուն) |

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Նոյավան» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու վերաբերյալ:
4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Նոյավան» ՍՊ ընկերությանը հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ալ-Սան» ՍՊԸ-ի 07.06.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով և գործում

առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ***<u>ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով</u>***, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում է յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***<u>մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ</u>***:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:</u>*** Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ **<u>եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան</u>**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.2 կետի համաձայն՝ ***<u>մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:</u>*** Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

(…)

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը,*** որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ ***դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Այսպես, «ՀՀ Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սանհանգույցի հիմնանորգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «100-ՂՄԴ-ԳՀԱՊՁԲ- 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Ալ-Սան» և «Նոյավան» ՍՊ ընկերությունները:

«Նոյավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ Հավելված 2-ը՝ գնային առաջարկը.

| Չափաբաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | Սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքներ | 1.879.290 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր իննսուն) | 375.860 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր վաթսուն) | 2.255.150 (երկու միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար հարյուր հիսուն) |

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Նոյավան» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Նոյավան» ՍՊ ընկերությանը հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Նոյավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ի՝ գնային առաջարկի, ուսումնասիրության արդյունքում, արձանագրում եմ, որ «Նոյավան» ՍՊԸ-ի կողմից Հավելված 2-ում ԱԱՀ-ն սխալ է հաշվարկվել և ներկայացվել, մասնավորապես՝ 1 879 290 ՀՀ դրամի նկատմամբ ԱԱՀ-ն (20 %) կազմում է 375 858 ՀՀ դրամ, մինչդեռ «Նոյավան» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկում ԱԱՀ-ն նշվել է 375 860 ՀՀ դրամ, այսինքն՝ «Նոյավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, հիմք ընդունելով վերոնշված իրավակարգավորումները, ի սկզբանե ենթակա է եղել մերժման, ուստի հանձնաժողովի կողմից 02.06.2021թ. թիվ 2 արձանագրության համաձայն վերջինիս հայտը բավարար

գնահատելու և 07.06.2021թ. թիվ 3 արձանագրության համաձայն հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումներն իրավաչափ չեն:

Անդրադառնալով բողոքով ներկայացված հետևյալ պահաջին՝ պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին Ընթացակարգի շրջանակներում նոր բանակցություններ հրավիրելու վերաբերյալ, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է նաև բանակցությունների անցկացման ժամկետները. բանակցությունների մասին ծանուցում չի ուղարկվել, այլ ընդամենը 03.06.2021թ. երեկոյան «Ալ-Սան» ՍՊԸ-ին ուղարկվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության պատճենը (արձանագրության 5.5 կետի համաձայն՝ բանակցությունների նիստը հրավիրել 04.06.2021թ.-ի ժամը 13:00-ին ՀՀ Արարատի մարզի գ. Ղուկասավանի Արամի 39 հասցեում):

Վերոգրյալի վերաբերյալ արձանագրում եմ, որ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ. պարբերությամբ հստակ սահմանվում է առաջարկված գների նվազեցման շուրջ ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրելու ժամկետները, այն է՝ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Նման պայմաններում գտնում եմ, որ խախտվել է նաև միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրելու վերաբերյալ ծանուցված լինելու նվազագույն ժամկետը, ուստի բողոքի պահանջը՝ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով գնահատող հանձնաժողովի նոր նիստ հրավիրելու վերաբերյալ, ևս ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

«Ալ-Սան» ՍՊԸ-ի կողմից 07.06.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «100-ՂՄԴ-ԳՀԱՊՁԲ- 21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնելու 02.06.2021թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ «Նոյավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը,

2. Մերժելու «Նոյավան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը,

3. Դադարեցնելու 04.06.2021թ. ժամը 13:00-ին ՀՀ Արարատի մարզի գ. Ղուկասավանի Արամի 39 հասցեում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ընդունված բոլոր որոշումները,

4. Ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրել գնահատող հանձնաժողովի նոր նիստ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**